եւ Մարտիրոս Երզնկացի մը, որոնք Վենետիկ–Հռոմ ճանապարհը կ'ընթանան աւելի կամ նուազ երկար ոտով, եւ կը յայտնեն իրենց սքանչանքը Ադրիական դշխոյի փառքին վրայ։ Կը թողում յիշել Աւգոստինոս Բաջենցը, Յովհաննէս Թութունճին, Յակոբ Կարնեցին եւ ուրիշներ։ Անոնք ոչ իրենց աշխարհահայեացքով եւ ոչ ալ բաղմաշրջութեամբ կրնան հեռուէն անդամ մրցակից ներկայանալ Սիմէոնի։

Արդէն երկար ուղեգիծը՝ Լվով—Կ. Պոլիս—Զմիւռնիա—Կ. Պոլիս—Վենետիկ—Հռոմ—Մուշ—Կ. Պոլիս—Գահիրէ—Երուսաղէմ—Հալէպ—Կ. Պոլիս—Լվով, ինչպէս եւ ժամանակը՝ 1608—1619, բաւական են համոզելու զմեզ, թէ Սիմէոն ունի շատ բան պատմելու իւր շատաշրջիկ կեանքէն եւ ապրումներէն։

Սիմէոն բարի եւ «պարզամիտ մարդ» (214—215) է. անիկա կը հաւատայ տեսիլքներու եւ հրաշքներու. կը զարմանայ ամէն տեսածի եւ լսածի վրայ միամտօրէն։ Բարեմտութիւնն եւ ճշմարիտ հաւատքը իր ընկերներն եղած են իր երկար ճանապարհին վրայ։ Իր այս նկարագրով սիրուած է անիկա ամէն տեղ։ Իր բարեմտութիւնը կը թելադրէ մեզի հաւատք ընծայելու իրեն, ընդունելու իր պատմածները այնպէս, ինչպէս տեսած եւ լսած է։

Ոչ միայն աշխարհներն եւ ժողովուրդները հետաքրքրած են զինքը, այլ եւ զնա-